https://doi.org/10.46991/S&L/2022.94.057

«ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Աննա Մկրտչյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր

Քաղաքացիական իրավունքի ինստիտուտների միջև առկա փոխկապակցվածության, հարակից ինստիտուտների նմանությունների ու առանձնահատկությունների բացահայտումը հնարավորություն է ընձեռում վեր հանել քաղաքացիական իրավունքի օրինաչափություններն ու նպաստել քաղաքացիական իրավահարաբերությունների զարգացմանը:

Իրավունքի ինքնապաշտպանությունը համարվում է ընդհանուր կարգավորում, որը հնարավորություն է տալիս ընտրել փաստացի գործողություններ, որոնք արգելված չեն օրենքով և համաչափ են օրենքի պայմաններին: Օրենսդրական կարգավորումների բնույթից բխում է, որ ընդհանուր մասում ընդգրկված ինստիտուտների կիրառելիությունը սահմանափակված չէ: Սակայն, բացի իրավունքի ինքնապաշտպանության ընդհանուր ամրագրումից, քաղաքացիական օրենսդրության այլ ինստիտուտների կարգավորման նորմերում ընդգրկված են նաև պաշտպանության առանձին եղանակներ: Ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ իրավունքի ինքնապաշտպանության ընդհանուր նորմը և այլ ինստիտուտների պաշտպանության եղանակները գործում են զուգահեռաբար: Սակայն հարակից ինստիտուտների պաշտպանության կարգավորումների կարգավիճակի, գործողության շրջանակների ու տարբերությունների վերաբերյալ հստակությունը բացակայում է:

Մասնավոր իրավահարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման ամենատարածված իրավաբանական փաստը պայմանագիրն է[1]: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսել է պայմանագրային հարաբերությունների որոշակի միջոցներ՝ ստանձնած պարտավորությունները կատարելու և կողմերի նպատակների անխեղ կատարումն ապահովելու համար: Այդ միջոցների կիրառումը իրավազոր անձի կողմից կարող են կիրառվել առանց երրորդ անձանց կամ պետական մարմիններին դիմելու: Սակայն միջոցներից յուրաքանչյուրի բնույթի և իրավական կարգավիճակի մասին համալիր ուսումնասիրություններ բացակայում են: Չկան նաև պայմանագրային հարաբերությունների և իրավունքի ինքնապաշտպանության փոխահարաբերակցության, կիրառման իրավական շրջանակների մասին դրույթներ:

ՀՀ քաղ. օր.-ի պարտավորությունների և պայմանագրային հարաբերությունների շրջանակում կարգավորման առարկա է դարձել նաև պարտավորություններից և պայմանագրից միակողմանի հրաժարումը (348-րդ և 466-րդ հոդվածներ), որի դեպքում պայմանագիրը համարվում է լուծված կամ փոփոխված: Սակայն միակողմանի հրաժարումը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ՝

- ✓ առկա է կողմերի համաձայնություն կամ
- ✓ օրենքով սահմանված դեպքերում:

[1] Տե՛ս **Տ. Կ. Բարսեղյան,** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, դասագիրք, առաջին մաս, Երևան 2009, էջ 157-159:

Ըստ էության պայմանագրային պարտավորությունների չկատարումը ևս կարող է նախաձեռնվել և իրականացվել միակողմանի գործողություններով: Սակայն այդ պարագայում կատարվող գործողության բնույթը օրենսդրությունը չի բացահայտում: Այսինքն՝ պարզ չէ, թե միակողմանի կատարվող գործողությունը (պարտավորությունների կատարումից միակողմանի հրաժարումը) իրավունքի ինքնապաշտպանության տիրույթում իրականացվող փաստացի միակողմանի գործողություն կարո°ղ է դիտարկվել, թե° ոչ:

Օրենսդրությամբ ամրագրված դրույթների բովանդակային վերլուծությամբ առանձնացրել ենք հետևյալ զուգահեռները: Պայմանագրային պարտավորություններն ու իրավունքի ինքնապաշտպանությունը՝

✓ Միտված են ապահովելու իրավահարաբերությունների բնականոն ընթացքը,

✓ Իրավահարաբերությունների վրա ներգործությունը կարող է կատարվել ինչպես իրավունքի ինքնապաշտպանության, այնպես էլ պայմանագրային իրավունքի շրջանակներում,

✓ Իրավունքի ինքնապաշտպանության և պայմանագրային իրավահարաբերությունների ինստիտուտները՝որպես քաղաքացիաիրավական հարաբերություններ կարգավորող նորմերի համակարգեր, ուղղված են անձանց օրինական շահերի պաշտպանությանը և իրավական վարքագծի կանխորոշմանը,

✓ Երկու ինստիտուտների նպատակն է քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորումը և իրավունքի հնարավոր խախտումների կանխումը, վերացումը:

Արարքն ինքնապաշտպանություն որակելու համար անհրաժեշտ են երեք պայմանների միաժամանակյա առկայություն.

1. Ինքնապաշտապությունն իրականացվում է իրավազոր անձի կողմից: Այսինքն՝ նա է խախտված իրավունքի կրողը, և միայն նա է իրավասու դիմելու ինքնապաշտպանության[1]:

2. Արարքի համաչափությունը խախտված իրավունքի բնույթի հետ: Կարևորագույն նախապայման է, քանի որ ինքնապաշտպանության քողի ներքո ձեռնարկված ոչ բոլոր գործողություններն են համարվում իրավաչափ: Օրինակ, սեփականատիրոջ կողմից իր բազմամյա տնկիների պահպանության համար հրազենի կիրառումը համաչափ համարվել չի կարող[2]:

3. Ինքնապաշտպանության սահմանազանցումը երրորդ անհրաժեշտ բաղադրիչն է: Այն ապահովում է ինքնապաշտպանության ինքնանպատակ չլինելու հանգամանքը: Խախտված իրավունքի կրողը պիտի նպատակ ունենա վերկանգնել խախտված իրավունքն ու իրավահարաբերությունների բնականոն ընթացքը: Այն չպիտի իրավահարաբերության մյուս մասնակցին վնաս պատճառելու նպատակադրում ունենա [3]:

Իրավահարաբերություններում պայմանագրային բնույթի առկայության համար անհրաժեշտ է՝

1. երկու կամ մի քանի անձանց կամարտահայտության վրա հիմնված համաձայնություն, և

2. երկու կամ մի քանի անձանց կամքի արտահայտում, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

Անհրաժեշտ է պարզել՝ արդյոք վերոգրյալ ելակետերը բավարար են պնդելու

---

[1] Տե՛ս **В.М. Ведяхин, Шубина Т.В.** Защита права как правовая категория // Правоведение. №1, 1998 էջ 28:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

համար, որ իրավունքի ինքնապաշտպանությունը կիրառելի է պայմանագրային հարաբերություններում: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև անդրադառնալ այն հանգամանքին, թե ինչ փոխհարաբերակցության մեջ են պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները կամ օպերատիվ ներգործության միջոցները և իրավունքի ինքնապաշտպանության ընթացքում կիրառելի փաստացի գործողությունները:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում եզրահանգել ենք՝ իրավունքի ինքնապաշտպանության ոչ յուրիսդիկցիոն բնույթով պայմանավորված չեն առաջանում իրավական հետևանքներ, մինչդեռ պայմանագրային հարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարման նպատակը իրավական հետևանքի առաջացումն է[1]: Այդուհանդերձ, և՛ իրավունքի ինքնապաշտպանության, և՛ պայմանագրային իրավունքի դեպքում իրավազոր անձի կողմից իրականացվող գործողությունների իրավական հնարավորության նպատակը մասնավոր իրավահարաբերության բնականոն ընթացքի վերականգնումն է: Ըստ այդմ, մասնավոր և հանրային շահի զուգակցման հիմնախնդիրը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է կանոնակարգել առկա իրավունքի բացը:

Հայրենական իրավագիտության շրջանակներում չեն կատարվել ուսումնասիրություններ՝ բացահայտելու պայմանագրային իրավահարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության տեղն ու դերը, դրա կիրառման գիտատեսական հնարավորությունները:

Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած տեսակետների ուսումնասիրությունը հանգում է հետևյալին: Ըստ առաջին տեսակետի, իրավունքի ինքնապաշտպանության իրավական բնույթից ելնելով՝ այն չի կարող կիրառվել պայմանագրային հարաբերություններում, քանի որ պայմանագրային հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովման համար կիրառելի միջոցները պետք է սպառիչ ամրագրված լինեն օրենքով կամ պայմանագրով[2]: Պայմանագրային հարաբերությունների բնույթով պայմանավորված՝ այդ իրավահարաբերությունների ընթացքում ձեռնարկվող կանխատեսելիության գործոնը պետք է գերակշռի ընդհանուր առմամբ մասնավոր իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի կիրառման հնարավորություններին: Հակառակ պարագայում պայմանագրային հարաբերությունների շրջանակը կարող է էականորեն փոփոխվել՝ կողմերի համար առաջացնելով իրավական անբարենպաստ հետևանքներ:

Երկրորդ տեսակետի համաձայն՝ իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի էությունը այն է, որ այն սահմանափակված չէ մասնավոր իրավունքի այս կամ այն ինստիտուտի շրջանակներում կիրառելիության հանգամանքով: Այն կիրառելի է բոլոր այն դեպքերում, երբ իրավազոր անձի ձեռնարկած գործողությունները բավարարում են իրավունքի ինքնապաշտպանության համաչափության պայմաններին[3]:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության կառուցվածքի և կարգավորումների՝ իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտը ներառված է օրենսդրության ընդհանուր դրույթներում, իսկ պայմանագրային հարաբերությունները՝ հատուկ մասում: Նշանակում է, որ իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտը մասնավոր իրավունքի ոչ թե դրվագային, այլ մասնավոր հարաբերությունների ընդհանուր կարգավորիչ է, որից չի կարող դուրս դրվել պայմանագրային իրավունքը: Այդուհանդերձ, մենք չենք կարծում, որ իրավական ակտի միայն ընդհանուր և հա-

---

[1] Տե՛ս **С.И. Лебедев,** К вопросу о взаимообусловленности при осуществлении самозащиты гражданских прав в договорных отношениях, Юрист & Экономист, № 1, 2010, էջեր 7-11:

[2] Տե՛ս **Н.В. Южанин,** Самозащита в гражданском праве, статья, 2015թ., էջեր 121-125 https://cyberleninka.ru/article/n/samozaschita-v-grazhdanskom-prave/viewer: Հղումը հասանելի է 05.07.2021թ.-ի դրությամբ:

[3] Տե՛ս նույն տեղում:

տուկ մասերի կանոնը բավարար է պնդել, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը իրավունքի ինքնապաշտպանության ու պայմանագրային հարաբերությունների փոխգործակցության հիմնախնդիրը լուծել է: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ իրավունքի ինքնապաշտպանության հանգամանքը չի կարող դրվել իրավունքի չարաշահման և պայմանագրային հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարելու կամ պայմանագրի կողմերին վնաս պատճառելու հիմքում՝ դիտվելով իրավաչափ:

Այս հարցի հետ կապված՝ անհրաժեշտ է ուսումնասիրել՝

- իրավազոր անձանց հիմնախնդիրը պայմանագրային իրավունքում իրավունքի ինքնապաշտպանության դեպքում,
- իրավունքի ինքնապաշտպանության հնարավորության ամրագրումը կամ դրա կիրառման բացառումը պայմանագրով:

Անդրադառնալով իրավունքի ինքնապաշտպանության և պայմանագրային հարաբերություններում իրավազոր անձի հիմնախնդրին՝ անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը: Պաշտպանության ձևերի շարքում իրավունքի ինքնապաշտպանության առանձնահատկությունը այն է, որ անձը առանց երրորդ անձանց միջամտության իրավասու է ձեռնարկել գործողություններ, որոնք կարող են նպաստել իրավունքի խախտման վերացմանը կամ դրա վերականգնմանը: Պայամանգրային հարաբերությունների դեպքում պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները ևս ուղղված են առանց երրորդ անձանց միջամտության կամ պետական/տեղական իրավասու մարմիններին դիմելու իրավահարաբերության շտկման իրավական հնարավորությանը: Ինչպես իրավունքի ինքնապաշտպանության, այնպես էլ պայմանագրային իրավահարաբերությունների դեպքում գործողություններ կարող է ձեռնարկել միայն իրավազոր անձը, ում հանդեպ տեղ է գտել ենթադրյալ իրավախախտումը:

Անդրադառնալով պայմանագրում իրավունքի ինքնապաշտպանության նախատեսմանը՝ անհրաժեշտ է նշել, որ անգլոամերիկյան և մայրցամաքային իրավունքում մոտեցումները միմյանցից տարբեր են: Անգլոամերիկյան իրավական համակարգում պայմանագրային իրավահարաբերությունների առաջացման դեպքում կողմերը մեծապես կաշկանդված են պայմանագրային կարգավորումներով[1]: Իրավախախտման առկայության պարագայում կարող են ձեռնարկվել գործողություններ, որոնք թուլատրելի են որոշակի իրավահարաբերությունների համար: Օրինակ, սեփականատիրոջ կողմից իր գույքի հարկադիր վերադարձն այլոց անօրինական տիրապետությունից, անձին իրեն պատկանող հողատարածքից դուրս հանելը և այլն[2]: Ըստ էության, մեր իրավական մտքի տրամաբանությամբ կարող ենք արձանագրել, որ ինքնապաշտպանությունը անգլոամերիկյան իրավունքում թույլատրելի է այնքանով, որքանով դա չի խախտում որևէ օրենք: Այլ կերպ ասած՝ գործում է իրավունքի ընդհանուր կանոն առ այն, որ քաղաքացիաիրավական սուբյեկտներն ազատ են ընտրել օրենքով չարգելված ցանկացած վարքագիծ (self-help, stand-your-ground law)[3]: Այսինքն՝ պայմանագրի կարգավորման առարկա կարող են դառնալ նաև պաշտպանության այն միջոցները, որոնք կողմերի համար կարող են

---

[1] Տե՛ս В.М., Шумилов, Правовая система США, 3-е изд., 2013 էջ 408, Uniform commercial code of the USA, *2012 by The American Law Institute and the National Conference of Commissioners on Uniform State Laws, 2012:*

[2] Տե՛ս https://www.ncsl.org/research/civil-and-criminal-justice/self-defense-and-stand-your ground.aspx?fbclid=IwAR0nYSMfRjFytYbLyUneH2NMeN-MmcbRan4IrSBZP99SueaCA-LUxm6im64: Հղումը հասանելի է 21.08.2020թ. դրությամբ:

[3] Տե՛ս https://www.alllaw.com/articles/nolo/personal-injury/effect-stand-your-ground-laws-civil-claim-assault.html?fbclid=IwAR2ygbGVUPjcQHiWhTbRB--hiLP23Kk89FU0xnIwsTCpwORsOW8ZnPX9bLE: Հղումը հասանելի է 21.08.2020թ. դրությամբ, Vincent R. Johnson, Studies in American Tort Law, fifth edition, Carolina Academmic press, 2013:

դառնալ կիրառելի պայմանագրային հարաբերությունների խախտման դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը իրավունքից հրաժարման վերաբերյալ գործարքն առոչինչ է համարում, այն չի հանգեցնում իրավունքի դադարման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 11-րդ, 25-րդ, 305-րդ, 438-րդ հոդվածներ): Օրենսդրությունը իրավունքի ինքնապաշտպանության սուբյեկտիվ իրավունքից հրաժարման օրինական պայման չի նախատեսում: Ստացվում է, որ մեր ներպետական օրենսդրությունից չի բխում իրավունքի ինքնապաշտպանության կարգավորումը պայմանագրային դրույթներով: Դրա նախատեսումը կամ իրավունքի ինքնապաշտպանությունից հրաժարումը պայմանագրի պայմաններով կհամարվի անվավեր, իսկ այդպիսի գործարքի կամ գործարքի պայմանը կլինի առոչինչ: Ըստ էության իրավունքի ինքնապաշտպանության վերաբերյալ կարգավորումները պայմանագիրը նախատեսել չի կարող, ինչն էլ մեզ հիմք է տալիս կարծելու, որ չլուծված է շարունակում մնալ իրավունքի ինքնապաշտպանության և պայմանագրային պարտավորությունների զուգակցման հիմնահարցերը:

Խնդրի լուծման հնարավոր իրավական ճանապարհ ենք դիտում առանձին ինստիտուտներում իրավունքի ինքնապաշտպանության կիրառման պայմանների նախատեսումը: Իսկ ընդհանուր կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում հստակեցնել իրավունքի ինքնապաշտպանության բնորոշումը:

Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսդրության ընդհանուր մասի դրույթներով ամրագրել իրավունքի ինքնապաշտպանության սահմանումը և այն եղանակները, որոնք կիրառվում են ընդհանուր կարգով, օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ իրավակարգավորումները: Բոլոր մնացյալ դեպքերում մասնավոր իրավունքի յուրաքանչյուր ինստիտուտի կամ համասեռ հարաբերությունների կարգավորող բաժինների համար ամրագրել իրավունքի ինքնապաշտպանության ընթացքում ձեռնարկվող գործողությունները և կիրառելի եղանակները: Կարգավորման այս ճանապարհն ընտրելիս անհրաժեշտ է հավասարակշռել մարդու ազատ գործելու սահմանադրական իրավունքը, քաղաքացիական օրենսդրության կամքի ինքնավարության սկզբունքը այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության սկզբունքների հետ:

КЛАССИФИКАЦИЯ МЕТОДОВ САМОЗАЩИТЫ, СПОСОБСТВУЮЩИХ ВЫПОЛНЕНИЮ ДОГОВОРНЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ

Анна Мкртчян
Аспирант кафеды гражданского права ЕГУ,
Депутат Национального Собрания РА

Выявление взаимосвязанности договорных отношений между институтами самозащиты гражданского права, сходства и особенностей институтов направлено на развитие практического применения этих институтов. В статье отражено соотношение фактических односторонних действий, предпринятых при праве на самозащиту как способа отказа от договорных обязательств. Предметом обсуждения являются правовые последствия при самозащите права и договорных обязательств.

Автором предлагается закрепить определение права на самооборону в положениях общей части гражданского законодательства, во всех остальных случаях для каждого института частного права зафиксировать действия, предпринимаемые во время самозащиты права применимыми методами.

CLASSIFICATION OF SELF-DEFENSE METHODS CONTRIBUTING TO FULFILLMENT OF CONTRACTUAL OBLIGATIONS

Anna Mkrtchyan
PHD Student at the YSU Chair of Civil Law,
Member of the parliament RA

The revelation of the interconnectedness, similarities between self-defense and contract obligations institutes aimed to develop the practical application of these ainstitutions in private law. The article reflects the de facto actions taken during the right of self-defense and the legal aspect of unilateral refusal of contractual arrangements. Non-jurisdiction methods of protection of rights as well as protection of contractual legal relationship have been dicussed.

We propose to enshrine the definition of the right to self-defense in the provisions of the general part of the civil legislation. In all other cases, to define applicable methods for each institution of private law.

Բանալի բառեր - *ոչ յուրիսդիկցիոն պաշտպանության ձև, իրավունքի ինքնապաշտպանություն, պայմանագրային պարավորություններ, իրավական հետևանքներ:*
Ключевые слова: *внесудебная защита, самозащита права, договорные соглашения, правовые последствия.*
Key words: *non-jurisdictional defense, legal self-defense, contractual agreements, legal consequences.*